


Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՍԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ  
Գլխավէնս, Օհայօ



ST. GREGORY OF NAREK  
ARMENIAN APOST. CHURCH  
666 Richmond Road  
Cleveland, Ohio 44143, U.S.A.

Հովիւ †

Area Code 216—Tel. 381-6590

PASTOR-VERY REV. †

Արժ. Ս. Տիրան Բհնյ. Փափազեան

6 Փետրուար, 1973

Գեր. Ս. Թորգոմ Արք. Մանուկեան,  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի,  
Ի Նիւ Եորկ, Ն.Ե.,

Սիրելի Ս. Թորգոմ Արքազան,

Համաձայն կանխորոշուած թուականին, անցեալ Կիրակի, 28 Յունուարին, 1973, եկեղեցւոյ Միական Տարեկան Անդամական Ժողովը գումարուեցաւ, մեր Մշակութային սրահին մէջ, ժամը 2.30-ին, Յ.Մ., ընդ նախագահութեամբ Ժուլիան Նոր Հովուին, Արժ. Ս. Տիրան-Բհնյ. Փափազեանի: Դիւանի Ատենապետութիւնը վարեց Պրն. Բիչարտ Արսլանեան իսկ Ատենադպրութիւնը Օր.Մարթա Խաչերեան: Ժողովը վերջացաւ ժամը 5.00-ին, Օրակարգի հարցերուն սպառումով:

Ժողովը յառաջ ընթացաւ ըստ նախորոք կազմուած Օրակարգին: Եկեղեցւոյ 132 իրաւասու անդամներէն 46 հոգիի ներկայութեամբ ժողովը ծրինաւոր յայտարարուեցաւ, համաձայն թեմական Կանոնագրութեան, տրուած ըլլալով որ ընդհանուր անդամներուն թիւին Մէկ-Երրորդէն աւելին կը ներկայացնէին ներկայներուն թիւը:

Ձեզի շուտով կուղարկուի ժողովին Արձանագրութիւնը աւելի մանրամասնեալ ձեւով, առ այժմ կը փափաքինք ընտրութեանց արդիւնքը տեղեկագրել Ձեզի, որպէս զի փութով ստանանք ընտրութեանց վաւերացումը, տրուած ըլլալով որ ժողովը օրինաւոր էր ըստ ամենայնի:

Միական Խորհուրդի մասնակի ընտրութեան մէջ հետեւեալ հինգ -5- անդամները ընտրուեցան քուէներու առաւելութեամբ:

Պրն. Կարապետ Արփաճեան 43 քուէ, Պրն. Ճէք Խաչերեան վերընտրթն. 42 քուէ, Պրն. Ռապըթ Պաղտասարեան (Պապ Պէրի) 42 քուէ, Տիկ. Մայք (Հէլէն) Չէքէմեան 38 քուէ եւ Տիկ. Յլորանս (Թեանտա)- Գարօլլանեան վերընտրթն. 28 քուէ:

Միական Խորհուրդի 11 հոգիներու անձնակազմին մնացեալ անդամներն են հետեւեալները:

Պարոնայք Գէորգ Արսլանեան, Ռաֆի Զաքըրեան, Նազար Միրաքեան, Միքի Պաղտասարեան, Հէրի Օտապաշեան եւ Գարլոս Պոզօլլուեան:

Յաջորդ չորս -4- տարուայ շրջանին համար մեր նորընտիր թեմական զոյգ պատգամաւորներն են հետեւեալները:

Պարոնայք Նազար Միրաքեան 35 քուէ եւ Նուպար Ապտալեան վերընտրթն. 32 քուէ:

Հաշուեքնիչ Յանձնախումբի անդամները վերընտրուեցան բոլորով եւ անցեալ տարուան կազմն է նոյնութեամբ, ըստ հետեւեալին:

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

Գլխավէնս, Օհայօ



ST. GREGORY OF NAREK  
ARMENIAN APOST. CHURCH

666 Richmond Road  
Cleveland, Ohio 44143, U.S.A.

Հովիւ † ԱՐՄԵՆԱՅՑՆԵՐԻ ԳՐԻԳՈՐՆԵՐԻ

Area Code 216—Tel. 381-6590

PASTOR-VERY REV. † ԱՐՄԵՆԱՅՑ ՔՐԻՍՏՈՍԵՐԻ

Արժ. Տ. Տիրան ԹՀՆՅ. Փակագեան

( Եարուանակութիւն )

Պարոնայք ձէք խաչատուրեան, Ռիչարտ Արսւանեան եւ Օրիորդ Մարթա խաչերեան:

1973 տարւոյ Անուանիչ (Ընտրողական) Յանձնախումբը կը ներկայանայ հատեւեալ անդամներով:

Պարոն Նուպար Ապտալեան, Տիկնայք Մէյ խաչատուրեան, Սանտրա Արսւանեան, եւ Ան Գարայեան:

Աւելցնենք որ ԲԵ. օրը, 5 Փետր. 1973-ին Ծխական Խորհուրդի հերթական ժողովը գումարուեցաւ եւ ընթացիկ հարցերու կարգադրութենէն վերջ նոր դիւանի ընտրութիւն կայացաւ եւ համաձայն այս ընտրութեան արդիւնքին 1973 տարւոյ համար Ծխական Խորհուրդի դիւանը կազմուեցաւ ըստ հետեւեալին:

- |                                    |                         |
|------------------------------------|-------------------------|
| Պրն. Միքի Պաղտասարեան              | Ատենապետ                |
| Պրն. ձէք խաչերեան                  | Փ.-Ատենապետ             |
| Տիկ. Ֆլորանս (Թրֆանտա) Գարօջլանեան | Ատենադպիր (Ար ձանագրիչ) |
| Տիկ. Մայք (Հէլէն) Չէքէմեան         | Փ.-Ատենադպիր (Թղթակից)  |
| Պրն. Ռաֆֆի Զաքըրեան                | Գանձապահ                |
| Պրն. Ռապըթ Պաղտասարեան (Պապ Պէրի)  | Օգնական Գանձապահ        |
| Պրն. Գէորգ Արսւանեան               | Խորհրդական              |
| Պրն. Նազար Միրաքեան                | Խորհրդական              |
| Պրն. Հէրի Օտապաշեան                | Խորհրդական              |
| Պրն. Գարլոս Պողօնլուեան            | Խորհրդական              |
| Պրն. Կարապետ Արփաճեան              | Խորհրդական              |

Մեր Տարեկան Տեղեկագիրները կը յղենք Ձեզի ամիշապէս որ պատրաստ ըլլան անոնք: Առ այժմ զայսուսիկ կը հաղորդենք Ձեզի, յուսալով որ ընտրութեանց վաւերացումը կը ղրկէք մեզի շուտով Ձեր օրհնութիւններուն հետ արդիւնաւոր փարի մը բոլորելու համար:

Մնամք խոնարհաբար Քրիստոսի  
ծառայութեան մէջ,

Համբուրիւ Ձեր Ս. Աշոյն,

Տ.ՏԻՐԱՆ ԹՀՆՅ. ՓԱՓԱՉԵԱՆ, ՀՈՎԻԻ